

*Արտատպված է՝ Բ. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող»
հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:*

ՌՈՒՍՅԱՆ

Երեկոյան ժամը տասնմեկին Մոսկվա-Սևաստոպոլ ճեպընթացը Պոդոլսկն անցնելուց հետո կանգ առավ մի փոքրիկ կայարանում, որտեղ կանգառ չունեի, և ինչ-որ բանի էր սպասում երկրորդ գծի վրա: Գնացքում, առաջին կարգի վագոնի վարագույրով ծածկված պատուհանին մոտեցան մի պարոն և մի տիկին: Գծերի վրայով անցնում էր վագոնավարը՝ կարմիր լապտերը ձեռքից կախ, և տիկինը հարցրեց.

— Լսե՞ք, ինչո՞ւ ենք կանգնել:

Վագոնավարը պատասխանեց, որ ուշանում է հանդիպական ճեպընթացը:

Կայարանում մութ էր և մռայլ: Մթնշաղը վաղուց խտացել էր, բայց արևմուտքում, կայարանից այն կողմ, սևին տվող անտառածածկ դաշտերից այն կողմ դեռ աղոտ լուսավորում էր մոսկովյան ամառային երկար վերջալույսը:

Պատուհանից խոնավ ճահճահոտ էր ներս լցվում: Լռության մեջ ինչ-որ տեղից լսվում էր արքայալորի համաչափ, ասես նույնպես խոնավ ճթճթոցը:

Պարոնը հենվել էր պատուհանին, տիկինը՝ նրա ուսին:

— Մի անգամ ես ապրել եմ այս վայրերում, արձակուրդիս ժամանակ,— ասաց պարոնը:— Դասուսույց էի ամառանոցային մի դաստակերտում, այստեղից մոտ հինգ վերստի վրա: Տաղտկալի վայր է: Նոսր անտառ, կաչաղակներ, մոծակներ, ճպուռներ: Ոչ մի տեսարան չկար: Դաստակերտում հորիզոնով կարող էիր հիանալ միայն վերնահարկից: Տունն, իհարկե, ռուսական ամառանոցային ոճի էր և շատ բարձիթողի վիճակում,— տանտերերն աղքատացած մարդիկ էին,— տան ետևում այգու նման մի բան էր, իսկ այգուց այն կողմ՝ չգիտես լճակ էր, թե ճահիճ՝ ձլախոտով ու ջրաշուշանով պատած և անպայման հարթահատակ նավակ խրուտ ափին:

— Եվ, իհարկե, ձանձրացող ամառանոցային ջահել աղջիկ, որին դու նավակով ման էիր տալիս այդ ճահճի մեջ:

— Այո, ամեն բան, ինչպես կարգն է: Միայն թե աղջիկն ամեննին էլ ձանձրացող չէր: Նավակով ման էի տալիս նրան մեծ մասամբ գիշերները և նույնիսկ շատ բանաստեղծական էր այդ ստացվում: Արևմուտքում երկինքն ամբողջ գիշեր կանաչավուն էր, թափանցիկ, իսկ հեռվում, հորիզոնում, ինչպես հիմա, շարունակ ինչ-որ բան մարմրում էր, մարմրում... Ընդամենը մի թի գտնվեց, այն էլ բառի նման, ու ես թիավարում էի դրանով վայրի մարդու նման՝ մեկ աջ, մեկ ձախ: Դիմացի ափը մութ էր նոսր անտառից, սակայն անտառից այն կողմ ամբողջ գիշեր այս տարօրինակ կիսալույսն էր փռված: Եվ ամենուրեք աներևակայելի լռություն, միայն մոծակներն էին տոգում ու ճպուռները թռչում: Երբեք մտքովս չէր անցնի, որ դրանք թռչում են գիշերով. պարզվեց՝ թռչում են, չգիտես ինչու: Ուղղակի սարսափելի էր:

Հանդիպական գնացքը վերջապես աղմկեց, վրա հասավ դղրդոցով ու քամի բարձրացնելով, լուսավորված պատուհանները ոսկեգույն մի ժապավենի միաձուլված, և անցավ մեր կողքից: Վագոնն անմիջապես տեղից շարժվեց: Վագոնավարը ներս մտավ կուպե, լուսավորեց այն ու սկսեց անկողինները պատրաստել:

— Դեհ, և ի՞նչ եղավ քո և այդ աղջկա միջև: Իսկական սիրավե՞պ: Չգիտես ինչու նրա մասին երբեք ինձ չես պատմել: Ինչպիսի՞ն էր նա:

— Նիհար, բարձրահասակ: Դեղին չթե սարաֆան էր հագնում և բոբիկ ոտքերին ինչ-որ գույնզգույն բրդյա թելերից հյուսած գեղջկական տրեխ:

— Նորից, ուրեմն, ռուսական ոճի՞:

— Կարծում եմ, որ ավելի շուտ աղքատության ոճի: Հագնելու բան չունեմ, նա էլ սարաֆան էր հագնում: Եվ հետո, նա նկարչուհի էր, սովորում էր Ստրոգանովի գեղանկարչության ուսումնարանում: Եվ նա ինքն էլ գեղապատկերային էր, նույնիսկ սրբապատկերային: Երկար սև հյուսքը ուսին, թուխ դեմք՝ փոքրիկ մուգ խալերով, նեղլիկ, ուղիղ քիթ, սև աչքեր, սև հոնքեր... Մազերը չոր և կոշտ, թեթևակի գանգուր: Այդ բոլորը դեղին սարաֆանի և բլուզի սպիտակ մարմաշե թևքերի մեջ շատ գեղեցիկ էին ընդգծում: Կոճերը և ոտնաթաթերը տրեխների մեջ նույնպես նիհար էին, չոր, նուրբ թուխ մաշկի տակից երևացող ոսկորներով:

— Ես այդ տիպը գիտեմ: Կուրսերում ես այդպիսի մի ընկերուհի ունեի: Հիստերիկ բնավորություն ուներ երևի:

— Հնարավոր է: Մանավանդ որ դեմքով շատ նման էր մորը, իսկ մայրը ծննդյամբ ինչ-որ իշխանուհի էր արևելյան արյունով, տառապում էր սև մելամաղձության նման մի բանով: Դուրս էր գալիս միայն սեղան նստելու: Գալիս էր, նստում ու լռում, հագում, առանց աչքերը բարձրացնելու, ու մի գլուխ դանակ-պատառաքաղի տեղերն էր փոխում: Իսկ եթե հանկարծ խոսում էր, ապա այնքան հանկարծակի և բարձր, որ ցնցվում էիր:

— Իսկ հա՞յրը:

— Նույնպես լռակյաց էր ու չոր-չոր, բարձրահասակ, պաշտոնաթող զինվորական: Պարզ ու հաճելի էր միայն նրանց տղան, որի հետ պարապում էի:

Վագոնավարը դուրս եկավ կուպեից, ասաց, որ անկողինները պատրաստ են և բարի գիշեր մաղթեց:

— Իսկ ինչպե՞ս էր նրա անունը:

— Ռուսյա:

— Դա ի՞նչ անուն է:

— Շատ սովորական՝ Մարուսյա:

— Եվ ինչ, դու շա՞տ սիրահարված էիր նրան:

— Իհարկե, թվում էր, որ սարսափելի:

— Իսկ նա՞:

Ամուսինը լռեց, ապա չոր պատասխանեց:

— Հավանաբար նրան էլ էր այդպես թվում: Մակայն գնանք քնենք: Մարսափելի հոգնել եմ ամբողջ օրը:

— Շատ սիրալիրն ես: Միայն գուր հետաքրքրությունս շարժեցիր: Գոնե մի երկու խոսքով ասա, թե ձեր սիրավեպն ինչպես ավարտվեց:

— Ոչ մի կերպ: Մեկնեցի, և վերջ:

— Ինչո՞ւ նրա հետ չամուսնացար:

— Երևի նախագգում էի, որ քեզ պիտի հանդիպեմ:

— Չէ, իսկապես:

— Դեհ, որովհետև ես ինձ ատրճանակով խփեցի, նա էլ իրեն սրախողխող արեց...

Եվ լվացվելով ու ատամները մաքրելով, նրանք փակվեցին կուպեում առաջացած նեղվածքի մեջ, հանվեցին և ճանապարհային հաճույքով պառկեցին թարմ շողշողուն սավանների ու նույնպիսի բարձերի վրա, որ շարունակ ցած էին սահում մի քիչ բարձրացված գլխատակից:

Դռան վրայի կապույտ-մանիշակագույն գիշերալույսը մեղմ վառվում էր մթության մեջ: Կինը շուտով քնեց, պարոնը քնած չէր, պառկել, ծխում էր ու մտովի տեսնում այն ամառը...

Նրա մարմնի վրա նույնպես փոքրիկ ու մուգ շատ խալեր կային, այդ առանձնահատկությունը սքանչելի էր: Այն բանից, որ քայլում էր փափուկ ոտնամանով, առանց կրունկների, նրա ամբողջ մարմինը թրթռում էր դեղին սարաֆանի տակ: Սարաֆանը լայն էր, թեթև, և երկայնահասակ աղջկական մարմինը այնքա՛ն ազատ էր այդ զգեստի մեջ: Մի անգամ նա ոտքերը թրջել էր անձրևից, այգուց ներս ընկավ հյուրասենյակ ու ինքը նետվեց աղջկա կոշիկները հանելու ու համբուրելու նրա թաց, նեղիկ ոտնաթաթերը. այդպիսի

երջանկություն այլևս չէր ապրել իր ողջ կյանքում: Թարմ, անուշաբույր անձրևը գնալով ավելի սաստիկ ու վարար էր աղմկում դեպի պատշգամբ բաց դռներից այն կողմ, մթնգաճ տանը բոլորը քուն էին մտել ճաշից հետո, և ի՛նչ սարսափելի վախեցրեց նրանց երկուսին էլ մի սև, մետաղյա-կանաչափայլ փետուրներով աքաղաղ՝ մեծ, հրեղեն կատարով, որ հանկարծ նույնպես այգուց ներս վազեց ճանկերը հատակին դոփդոփելով ամենաթեժ այն պահին, երբ նրանք մոռացել էին որևէ զգուշություն: Տեսնելով, ինչպես վեր թռան նրանք բազմոցից, աքաղաղը շտապով, կուչ գալով, ասես անհարմար զգալուց, ետ վազ տվեց անձրևի տակ փայլուն պոչը կախ գցած...

Առաջին շրջանում աղջիկը շարունակ նայում էր նրան, երբ ինքը խոսում էր հետը, կաս-կարմիր էր կտրում պատասխանում ծաղրական քրթմնջոցով, սեղանի շուրջ հաճախ դիպչում էր նրա ինքնասիրությանը, բարձրաձայն դիմում հորը.

— Զուր մի հյուրասիրեք նրան, հայրիկ: Նա շոռաբլիթ չի սիրում: Ասենք, նա թանապուր էլ չի սիրում, ու լապշա էլ չի սիրում, իսկ մաժունն ուղղակի արհամարհում է, կաթնաշոռը պարզապես տանել չի կարող:

Առավոտներն ինքը զբաղված էր տղայի հետ, իսկ աղջիկը տնտեսության գործերով. ամբողջ տան հոգսը նրա վրա էր: Ճաշում էին ժամը մեկին, իսկ ճաշից հետո աղջիկը գնում էր իր վերնահարկը կամ էլ, եթե անձրև չէր լինում՝ այգի, ուր բրեզենտի տակ դրված էր նրա նկարակալը, և մոճակներ քշելով սկսում էր նկարել բնօրինակից: Հետո սկսեց դուրս գալ պատշգամբ, ուր նա ճաշից հետո գիրքն առած նստում էր եղեգնյա ծուռ բազկաթոռին, ու կանգնում էր ձեռքերը մեջքին, նայում նրան անհասկանալի հեգնական:

— Կարելի՞ է իմանալ, թե այդ ինչ իմաստություններ եք բարեհաճում սերտել:

— Ֆրանսիական հեղափոխության պատմությունը:

— Ախ, տե՛ր աստված: Զգիտե՛ի, որ մեր տանը հեղափոխական է հայտնվել:

— Իսկ դուք ինչո՞ւ ձեր գեղանկարչությունը թողեցիք:

— Ահա ուր որ է բոլորովին կթողնեմ: Համոզվեցի, որ անտաղանդ եմ:

— Ինձ որևէ բան ցույց կտա՞ք ձեր նկարածներից:

— Իսկ դուք կարծում եք, որ բա՛ն եք հասկանում գեղանկարչությունից:

— Դուք սարսափելի ինքնասեր եք:

— Այո, այդ մեղքն ունեմ...

Վերջապես առաջարկեց մի անգամ իր հետ նավակով զբոսնել լճի վրա, ասաց միանգամից ու վճռաբար:

— Կարծես մեր արևադարձային վայրերի անձրևային շրջանը վերջացավ: Եկեք զվարճանանք: Մեր պատիկ մակույկը, ճիշտ է, բավական փտած է ու հատակն էլ ծակ, բայց ես ու Պետյան բոլոր ծակերը փակել ենք ճլախոտով:

Շոգ օր էր, հողից գոլորշի էր բարձրանում, դեղին ընձախոտով ակոսված մերձափնյա կանաչը հեղձուցիչ տաքացել էր խոնավ տաքությամբ և նրա վրա ցածր սավառնում էին անհաշիվ-անհամար բաց կանաչ թիթեռնիկներ:

Արդեն յուրացրել էր աղջկա մշտական հեգնական տոնը և, մոտենալով նավակին, ասաց.

— Վերջապես դուք բարեհաճեցիք իջնել իմ մակարդակին:

— Վերջապես դուք կարողացաք միտք ունենալ ինձ պատասխանելու,— ժիր պատասխանեց նա և թռավ նավակի քթամասը, վախեցնելով գորտերին, որ ամեն կողմից ջուրը թռան, սակայն հանկարծ զարհուրելի բղավեց սարաֆանը մինչև ծնկները վեր քաշելով ու ոտքերը դոփդոփելով.

— Լորտո՛ւ, լորտո՛ւ:

Նա մի պահ տեսավ աղջկա մերկ ծնկների փայլուն թխությունը, նավաքթից քաշեց թին ու խփեց դրանով նավակի հատակին գալարվող լորտուին, հետո թին տակը տալով, այն շարտեց հեռու ջրի մեջ:

Աղջիկը գունատ էր մի տեսակ հնդկական գունատությամբ, դեմքի խալերը ավելի էին մգացել, ոտքերի և մազերի սևությունը կարծես ավելի էր սևացել: Նա թեթևացած շունչը ետ բերեց.

— Օհ, ինչ գարշելի բան է: Զուր չէ, որ սարսափ բառը սրանից է ծագել¹: Դրանք այստեղ ամենուրեք են՝ և այգում, և տան տակ... Ու Պետյան, պատկերացնում եք, բռնում է ձեռքի մեջ:

Առաջին անգամ էր, որ խոսում էր հետը պարզ, և առաջին անգամ նրանք ուղիղ իրար աչքի նայեցին:

— Բայց ինչ քաջն եք: Ո՞նց դրան հասցրիք:

Նա արդեն լրիվ տիրապետել էր իրեն, ժպտաց և նավաքթից նավակ թռչելով, ուրախ նստեց: Այդ վախի մեջ աղջիկը նրան ցնցեց իր գեղեցկությամբ, և հիմա նա մտածեց քնքշանքով. այո, սա դեռ փոքրիկ աղջիկ է: Սակայն իրեն անտարբեր տեսք տալով, անհանգստացած մտավ նավակ, թին հենելով սառը հատակին, նավակը շրջեց քիթը դեպի առաջ ու տարավ ստորջրյա խճճված թփերի միջով դեպի լճեղեգնի կանաչն ու ծաղկած զանգակածաղիկները, որ առջևում ամեն ինչ ծածկել էին իրենց հաստ կլոր թփերի հոծ շերտով, դուրս հանեց նավակը ջրի մեջ և նստեց մեջտեղի նստարանին, աջ ու ձախ թիավարելով:

— Լավ է, չէ՞,— գոչեց աղջիկը:

— Շատ,— պատասխանեց նա ու, գլխարկը հանելով, դիմեց աղջկան.— Բարի եղեք, զգեք ձեր կողքին մնա, թե չէ մեկ էլ գլխիցս կզգեմ այս տաշտակի մեջ, որը, ներեցեք, համենայն դեպս ջուր է բաց թողնում ու մեջը լիքը տգրուկներ են:

Աղջիկը գլխարկը դրեց ծնկներին:

— Նեղություն մի քաշեք, զգեք մի տեղ մնա:

Աղջիկը գլխարկը սեղմեց կրծքին.

— Ոչ, ես կպահեմ:

¹ Այստեղ բառախաղ է ռուսերեն *уж-լորտու* և *ужас-սարսափ* բառերի նմանությամբ (*ծթ.*):

Նրա սիրտը նորից քնքշանքով թրթռաց, բայց նա դարձյալ երեսը շրջեց և սկսեց եռանդով թին շարժել ճլախոտերի և ջրաշուշանների միջից փայլվող ջրի մեջ:

Ձեռքներին ու երեսներին մոծակներ էին կաշում, շուրջն ամեն ինչ կուրացնում էր տաք արծաթափայլով, տաք գոլորշիներով հագեցած օդ, արևի աղոտ լույս, ամպերի գանգուր սպիտակ, որ մեղմ փայլում էին երկնքում և ճլախոտերի ու ջրաշուշանների կղզյակների արանքում ջրի մեջ. ամեն տեղ այնքան ծանծաղ էր, որ երևում էր հատակը ստորջրյա խոտերով, սակայն դա կարծես չէր խանգարում այն անհատակ խորությանը, որի մեջ սուզվում էր արտացոլված երկինքը ամպերով: Հանկարծ աղջիկը ճչաց, ու նավակը կողքի շրջվեց. աղջիկը ձեռքը մտցրել էր ջրի մեջ ու ջրաշուշանի ցողունը բռնելով այնպես էր ձգել իր կողմ, որ շրջվել էր նավակի հետ. նա հագիվ հասցրեց տեղից թռնել ու բռնել աղջկա թևատակերից: Աղջիկը բարձր քրքջաց ու մեջքի վրա ընկնելով նավախելին, թաց ձեռքի ջուրը շփեց ուղիղ նրա աչքերին: Այն ժամանակ նա բռնեց աղջկան ու ինքն էլ չհասկանալով, թե ինչ է անում, համբուրեց աղջկա հոռոպացող բերանը: Աղջիկը արագ գրկեց նրա պարանոցը ու անհամարձակ համբուրեց նրա այտը...

Այդ օրից նրանք սկսեցին նավակով զբոսնել գիշերները: Հաջորդ օրը ճաշից հետո աղջիկը նրան կանչեց այգի ու հարցրեց.

— Դու ինձ սիրո՞ւմ ես:

Նա պատասխանեց ջերմորեն, հիշելով երեկվա համբույրները նավակի մեջ:

— Մեր հանդիպման առաջին օրից:

— Ես էլ,— ասաց աղջիկը:— Ոչ, սկզբում ասում էի, ինձ թվում էր, որ բոլորովին ուշադրություն չես դարձնում ինձ վրա: Բայց, փառք աստծու, դա արդեն անցավ-գնաց: Այսօր երեկոյան, հենց որ բոլորը պառկեն քնելու, գնա նույն տեղն ու սպասիր ինձ: Միայն թե տոնից որքան կարելի է զգուշորեն դուրս արի. մայրիկը հետևում է իմ ամեն քայլին, խելագարության աստիճանի խանդոտ է:

Գիշերը աղջիկը եկավ լճափ մի շալ ձեռքին: Ուրախությունից նրան դիմավորեց շփոթված, հետո հարցրեց.

— Իսկ շալն ինչի՞ համար է:

— Ինչ հիմարն ես: Ցուրտ է, կմրսենք: Դեհ, շուտ նստիր ու թիավարիր դեպի մյուս ափ...

Ամբողջ ճանապարհին լուռ էին: Երբ մոտեցան մյուս ափի անտառին, աղջիկն ասաց,

— Ահա հասանք: Հիմա արի ինձ մոտ: Շալն ո՞ր է: Հա, իմ տակն է: Ծածկիր ինձ, սառել եմ, ու նստիր: Ահա այսպես...

Չէ, սպասիր, երեկ մենք շատ անշնորհք էինք համբուրվում, հիմա նախ ես քեզ կհամբուրեմ, միայն թե կամաց, կամաց: Իսկ դու ինձ գրկիր... ամեն տեղս...

Ուժասպառ վիճակում պառկելուց հետո նա տեղից բարձրացավ և բերկրալի հոգնության ու դեռ չմարած ցավի ժպիտը դեմքին ասաց.

— Հիմա մենք արդեն մարդ ու կին ենք: Մայրիկն ասում է, որ իմ ամուսնությանը չի դիմանա, բայց հիմա չեմ ուզում այդ մասին մտածել... Գիտես, ուզում եմ լողանալ, սարսափելի ուզում եմ լողանալ, սարսափելի սիրում եմ լողանալ գիշերով...

Նա գլխի վրայով հանվեց, սպիտակին տվեց մթի մեջ իր ողջ երկարուկ մարմնով ու սկսեց հյուսքը փաթաթել գլխին, ձեռները բարձրացնելով, ցույց տալով մուգ թևատակներն ու բարձրացած կուրծքը, չամաչելով իր մերկությունից ու փորի տակի փոքրիկ մուգ եռանկյունուց: Հյուսքը գլխի շուրջ ամրացնելով, աղջիկն արագ համբուրեց նրան, թռավ կանգնեց ու բերանքսիվայր իրեն ջուրը նետեց, գլուխը ետ գցեց ու սկսեց ոտներն աղմուկով թմփթմփացնել ջրի մեջ:

Հետո նա, առանց շտապելու օգնեց աղջկան հագնվել ու փաթաթվել շալի մեջ: Մթի մեջ հեքիաթային էին երևում նրա սև աչքերը և հյուսք արած սև մազերը: Նա այլևս չհամարձակվեց դիպչել աղջկան, միայն համբուրում էր նրա ձեռքերն ու լռում անասելի երջանկությունից: Շարունակ թվում էր, թե ինչ-որ մեկը կա մերձափնյա անտառի մթության մեջ, լռին, տեղ-տեղ մարմրող լուսատիկներով, որ կանգնած է ու ականջ է դնում: Երբեմն այնտեղ մի բան կամացուկ խշխշում էր: Աղջիկը բարձրացնում էր գլուխը:

— Սպասիր, սա ինչ է:

— Մի վախենա, երևի գորտ է ավի սողոսկում: Կամ էլ ոգնի է անտառում...

— Իսկ եթե քարա՞յծ է:

— Ի՞նչ քարայծ:

— Չգիտեմ: Բայց պատկերացրու. դուրս է գալիս անտառից մի քարայծ, կանգնում է ու նայում... Ես այնքան լավ եմ զգում ինձ, որ ուզում եմ սարսափելի հիմարություններ դուրս տալ:

Ու նորից շրթունքներին էր սեղմում աղջկա ձեռքերը, երբեմն մի տեսակ սրբության պես համբուրում նրա սառը կուրծքը: Ինչ բոլորովին նոր արարած դարձավ նա հիմա իր համար: Ու կանգնած էր, ու չէր մարում ցածր անտառի ետևում կանաչավուն կիսալույսը, որ թույլ արտացոլվում էր հարթ սպիտակին տվող ջրի մեջ հեռվում, սուր, նեխուրի հոտ էին արձակում առափնյա բույսերը, խորհրդավոր, աղերսական նվվում էին անտեսանելի մոծակները, ու թռչում, թռչում էին կամացուկ ճտճտոցով, թռչում նավակի վրայով, հեռու՝ այդ գիշերային լուսավորված ջրի վրայով, սարսափելի, անքուն ճպուտները: Ու ամեն ինչ ասես խշխշում էր, սողում, սողոսկում...

Մի շաբաթ հետո նրան տգեղ ձևով, խայտառակությամբ, սարսափահար բոլորովին անսպասելի անջատումից, դուրս վոնդեցին տնից:

Մի անգամ ճաշից հետո երկուսով նստել էին հյուրասենյակում, գլուխ-գլխի, ու պատկերներ էին նայում «Նիվայի» հին համարները թերթելով:

— Դու դեռ չե՞ս դադարել ինձ սիրել,— կամացուկ հարցնում էր նա, ձևացնելով, թե ուշադիր նայում է:

— Հիմար ես: Սարսափելի հիմար,— շնջում էր աղջիկը:

Հանկարծ փափուկ վագոդ քայլեր լսվեցին, և շեմքին հայտնվեց աղջկա կիսախելագար մայրը՝ սև մետաքսե մաշված խալաթով, մաշված սեկե մաշիկներով: Նրա սև աչքերը շողում էին ողբերգական: Նա ներս վազեց, ինչպես բեմ, ու բղավեց:

— Ես ամեն ինչ հասկացա: Ես զգում էի, ես հետևում էի: Մրիկա՛, նա քոնը չի լինի:

Եվ երկար թևքով ձեռքը վեր պարզելով, խլացուցիչ կրակեց հին ատրճանակից, որով Պետյան ճնճուկներին էր վախեցնում, մեջը միայն վառող լցնելով: Նա ծխի մեջ վրա հասավ այդ կնոջը, բռնեց նրա կառչուն ձեռքը: Կինը դուրս պրծավ նրա ձեռքերից, ատրճանակով խփեց նրա ճակատին, ճղեց, արյունվիվ արեց հոնքը, ատրճանակը շարտեց երեսին ու լսելով, որ բղավոցի ու կրակոցի վրա մարդիկ են

վազ տալիս, փրփուրը կապտած շրթունքներին սկսեց բղավել է՛լ ավելի բարձր, ավելի թատերական.

— Միայն իմ դիակի վրայով, իմ դիակի վրայով նա քեզ մոտ կգա: Եթե փախնի հետո, նույն օրը կկախվեմ, տանիքից ինձ ցած կնետեմ: Մրիկա՛, դուրս կորի իմ տնից: Մարիա Վիկտորովնա, ընտրեցեք՝ կամ մայրդ, կամ նա:

Աղջիկը շնջաց.

— Դուք, դուք, մայրիկ...

Նա սթափվեց, բացեց աչքերը. նույն կերպ անփոփոխ, խորհրդավոր, գերեզմանային իրեն էր նայում սև մթությունից դուրս գլխի կապտա-մանիշակագույն գիշերալամպիկը, ու նույն անփոփոխ առաջ նետվող արագությամբ զսպանակելով ու ճոճվելով սլանում էր վագոնը: Արդեն հեռու, շատ հեռու էր մնացել այն տխուր կիսակայարանը: Եվ մի քսան տարի առաջ էր եղել այդ ամենը՝ մեկուսի անտառակները, կաշաղակները, ճահիճները, ջրաշուշանները, լորտուները, կոռունկները... Ամեն բան արտասովոր էր այդ զարմանալի ամռանը, արտասովոր էր և կոռունկների ինչ-որ մի գույգ, որ ժամանակ առ ժամանակ չգիտես որտեղից թռչում գալիս էին առափնյա ճահճուտները և այն, որ նրանք միայն աղջկան էին մոտ թողնում իրենց ու երկար, բարակ վզերը ձգած շատ խիստ, բայց բարեհաճ հետաքրքրությամբ նայում էին նրան վերնից, երբ նա իր խայտաբղետ տրեխիկներով փափուկ ու թեթև մոտ էր վազ տալիս նրանց ու հանկարծ չոքում նրանց առաջ, առափնյա խոնավ ու տաք կանաչի մեջ պարզելով իր դեղին սարաֆանը և մանկական չարաճճիությամբ նայում նրանց կարմիր ու ահարկու սև բիբերին՝ նեղ եզերված մուգ գորշավուն ծիածանաթաղանթով: Նա նայում էր աղջկան ու կոռունկներին հեռվից, հեռադիտակով ու հստակ տեսնում էր նրանց փոքրիկ փայլուն գլխիկները, նույնիսկ նրանց ոսկրե քթածակերը պինդ մեծ կտուցների վրա, որոնցով նրանք մի հարվածով սպանում էին լորտուներին: Նրանց պոչատ մարմինները, փոմփոլ փետուրներով պոչամասում, ծածկված էին պողպատագույն փետուրներով, չափազանց երկար ու բարալիկ թեփուկավոր ոտները՝ մեկինը սև էին, մյուսինը կանաչավուն: Երբեմն երկուսն էլ ժամերով կանգնում էին մի ոտի վրա անհասկանալիորեն անշարժ, երբեմն չգիտես ինչու սկսում էին թռչկոտել, պարզելով հսկայական թևերը, իսկ երբեմն էլ լուրջ-լուրջ քայլում էին, շարժվելով դանդաղ, համաչափ, բարձրացնելով թաթերն ու կծկելով վրայի երեք մատները, իսկ գետնին իջեցնելիս մատները պարզում էին, իրարից հեռացնում գիշատիչ ճանկերի նման ու շարունակ տարուբերում էին գլխիկները... Ասենք, երբ աղջիկը մոտ էր վագոն նրանց, ինքն արդեն ոչինչ չէր տեսնում, տեսնում էր միայն խոտին փռված նրա սարաֆանը, անասելի մի խոնջանք էր զգում, պատկերացնելով նրա թուխ մարմինը այդ սարաֆանի տակ, նրա մարմնի մուգ խալերը: Իսկ այն վերջին օրը, երբ վերջին անգամ նրանք նստել էին իրար կողքի հյուրասենյակում «Նիվայի» հին հատորն առաջները, աղջիկը դարձյալ իր ձեռքն էր առել նրա գլխարկը, սեղմում էր կրծքին, ինչպես այն ժամանակ նավակում, ու ասում էր, նրա աչքերին ուղղելով իր սև-կանաչավուն աչքերի երջանիկ փայլը:

— Իսկ ես քեզ հիմա այնքան եմ սիրում, որ ինձ համար ահա այս գլխարկի հոտից, քո գլխի հոտից ու քո գարշելի օծանելիքի հոտից սիրելի բան չկա:

Կուրսկն անցնելուց հետո վագոն-ռեստորանում, երբ ինքն ու կինը նախաճաշից հետո սուրճ էին խմում կոնյակով, կինը հարցրեց նրան.

— Ինչո՞ւ ես այդքան խմում: Կարծես սա արդեն հինգերորդ ըմպանակն է: Դեռ շարունակում ես տխրել, հիշում ես քո ոսկրոտ ոտնաթաթերով ամառանոցային աղջկա՞ն:

— Տխրում եմ, տխրում,— պատասխանեց նա տհաճ քմիծաղով:— Ամառանոցային աղջկան... Amata nobis quantum amabitur nulla!²

— Դա լատիներե՞ն է: Ի՞նչ է նշանակում:

— Քեզ դա պետք չէ իմանալ:

— Ինչքան կոպիտ ես,— ասաց կինը, անտարբեր հառաչելով, ու սկսեց դուրս նայել արևոտ պատուհանից:

27 հոկտեմբերի 1940

² Մեր սիրածի նման, ուրիշ ոչ մեկը չի կարող սիրված լինել (*լատ.*):